Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 24-06-2024 թ. որոշմամբ
«ԷՐԵԲՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԷՐԵԲՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍ ՏԻՏՈԳՐԱԴՅԱՆ ՓՈՂ. 133
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1073033
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2019-05-08
1.5 ՀՎՀՀ-ն		00484449
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99017789
		+(374)10470760
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.erebuniacademy.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@erebuniacademy.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ՀՐԱՐԱՐՏ ՍՊԸ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Ալինա Քուշկյան		
Հրաչյա Իկիլիկյան		
Արտյոմ Իկիլիկյան		
Միքայել Մանուկյան		
Հայկուհի Կժդրյան		
Անի Ալեքսանյան		
Արմինե Բաղդասարյան		
Նիլեշ Թիվարի		
Թերեզա Խաչատրյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արթուր Իկիլիկյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	59	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		

	Ուսման վարձավճարի փոխհատուցում	22,697,400
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ավանդ տոկոսներ	20,593,731
	Վարկեր	30,000,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ուսման վարձավճարներ	571,102,702
	Ընդունելության և բացակայության վճարներ	8,465,980
	Փոխառության հետ վերադարձ	24,701,102
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության իրականացում	578,533,246	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	578,533,246	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	578,533,246	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 8 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by SHAMIRYAN GAYANE 6714750145
Date: 2024.08.06 11:43:13 AMT

«ԵՐԵԲԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

2023Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

2023թ. գործունեության վերաբերյալ հաշվետվություն 5

Հաշվետվությանը կից ծանոթագրություններ

1. Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը 7
2. Կառավարման համակարգը 7
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր 7
4. Ֆինանսական հաշվետվության վավերացումը 8

ՀՀ, ք.Երևան 0014, Պ.Սևակ 8 Հեռ՝. (374 11) 60 70 81, info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Էրեբունի բժշկական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էրեբունի բժշկական ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) կից ներկայացված 2023թ. տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունը իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի մասով, որը ներառում է նաև հաշվետվությանը կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը (այսուհետ միասին՝ Ֆինանսական հաշվետվություն):

Մեր կարծիքով, Ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2023 թվականի գործունեության՝ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափի վերաբերյալ լրացված տվյալները՝ համաձայն դրամարկղային հիմունքի:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում. Հատուկ նպատակի հիմունքը

Մենք ուշադրության ենք հրավիրում Ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություն 3-ին, որտեղ ներկայացված է, որ Ֆինանսական հաշվետվությունը ՀՀ ՊԵԿ-ի նախագահի 2020թ. ապրիլի 17-ի N 337-Ն հրամանով սահմանված պահանջների համաձայն, հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքով պատրաստված հաշվետվություն է: Ուստի Ֆինանսական հաշվետվությունը չի կարող կիրառվել մեկ այլ նպատակով: Մեր կարծիքը սույն հանգամանքով պայմանավորված չի ձևափոխվել:

Ղեկավարության պատասխանատվությունը Ֆինանսական հաշվետվության համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվության պատրաստումը ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-
ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն
առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում
են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդե
ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվո
տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտակա
դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսակա
  հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ե
  աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերո
  աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մ
  կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրմ
  չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրմ
  չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնությո
  զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողությ
  համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվ
  հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ
  Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտ
  համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինլ
  ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումներ
  կից բացահայտումների խելամտությունը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը
  բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվութ
  հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավոր
շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարց
ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

31 հուլիսի, 2024թ.,
ք.Երևան, Պ.Սևակ 8

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО АУДИТОРСКАЯ КОМПАНИЯ РЕСПУБЛИКА ЕРЕВАН
CLOSED JOINT-STOCK COMPANY AUDITORSHIP REPUBLIC OF ARMENIA YEREVAN
00040998
«ԹԷՄ ԱՈՒԴԻԹ»
«ТМ АУДИТ»
«TM AUDIT»

«Էրեբունի բժշկական ակադեմիա» հիմնադրամ

2023թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի մասով

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«Էրեբունի բժշկական ակադեմիա» հիմնադրամ
1.2 Գտնվելու վայրը	ք.Երևան, Տիտոգրադան 133
1.3 Պետական գրանցման համարը	222.160.1073033
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	08.05.2019թ.
1.5 ՀՎՀՀ	00484449
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+374 10 47 07 60, +374 99 01 77 89
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.erebuniacademy.am
1.8 Էլեկտրոնային փոստը	info@erebuniacademy.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝՝	
«Հրարատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՀՎՀՀ 02565217)	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Քուշկյան Ալինա Անդամներ՝ 1. Իկիլիկյան Հրաչյա /«Հրարարտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ/ 2. Իկիլիկյան Արտյոմ /«Հրարարտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ/ 3. Մանուկյան Միքայել /«Էրեբունի» ԲԿ-ի գործադիր տնօրեն/ 4. Կժդրյան Հայկուհի /դասախոս/ 5. Ալեքսանյան Անի /դասախոս/ 6. Բաղդասարյան Արմինե /դասախոս/ 7. Խաչատրյան Թերեզա /ուսանող/ 8. Թիվարի Նիլեշ /ուսանող/	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	
Անունը՝ **Արթուր** Ազգանունը՝ Իկիլիկ**յան** Պաշտոնը՝ **գործադիր տնօրեն /ռեկտոր/**	
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը՝	59
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	

8. Ֆինանսավորման աղբյուրները՝			
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը	8.4
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր	Ուսման վարձավճարներ	22,697,400	
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր	Ավանդի տոկոսներ	20,593,731	
	Վարկեր	30,000,000	
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր			
	Ուսման վարձավճարներ	571,102,702	

	Ընդունելության և բացակայության վճարներ	8,465,980	
	Փոխառություն	24,701,102	
9. Հիմնադրի ներդրումը՝			
9.1 Դրամական միջոցներ			
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը	9.
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները			
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք		
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը	10
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ			
10.1.2 Իրավաբանական անձինք			
10.1.3 Ֆիզիկական անձինք			
11. Իրականացված ծրագրերը՝			
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը		11
Միջին և բարձրագույն մասնագիտական կրթության իրականացում	578,533,246		
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	578,533,246		
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	578,533,246		

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացությունը՝ 2 էջից

Գործադիր տնօրեն _____ Ա. Իկիլիկյան

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____ Գ. Շամիրյան

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Էրեբունի բժշկական ակադեմիա» հիմնադրամ
2023թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը
Կից ծանոթագրություններ

1. Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը

«Էրեբունի բժշկական ակադեմիա» հիմնադրամը ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2019թ.-ի մայիսի 2-ին «Հրարարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 02565217, պետական գրանցման համար՝ 222.160.1073033):

Հիմնադրամը չունի ասոցիացված կազմակերպություններ և համատեղ վերահսկվող միավորներ:

Հիմնադրամի նպատակներն են՝ միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության. հանրակրթության, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության իրականացումը:

Հիմնադրամի շահառուներն են՝ կրթական, առողջապահական, գիտական, հետազոտական, ուսումնաարտադրական բնագավառներին առնչություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Կազմակերպության գտնվելու վայրի հասցեն է՝ ք. Երևան, Տիտոգրադյան 133:

2. Կառավարման համակարգը

Կազմակերպության կառավարման մարմիններն են Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և գործադիր մարմինը (գործադիր տնօրեն/ռեկտոր): Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ հոգաբարձուների խորհրդին: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է նախագահից և 9 (ինը) անդամներից, այդ թվում՝

- թվով 2 անդամ՝ «Հրարարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցներից,
- թվով 3 անդամ՝ դասախոսական կազմից,
- թվով 2 անդամ՝ ուսանողության ներկայացուցիչներից,
- թվով 2 անդամ՝ կրթության, առողջապահության, գիտության ոլորտների և համագործակցող գործատուների ներկայացուցիչներից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր

3.1 Ֆինանսական հաշվետվությունը ներառում է 2023թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի մասով, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունը պատրաստվել է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի Նախագահի կողմից 2020թ. ապրիլի 17-ի թիվ 337-Ն հրամանով հաստատված պահանջների համաձայն:

3.2 Ֆինանսական հաշվետվությունը եկամուտների (մուտքերի) և ծախսերի (ելքերի) վերաբերյալ հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված հաշվետվություն է:

Կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունը պատրաստել է՝ կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը: Դրամարկղային հիմունքը հաշվապահական հաշվառման այլ համապարփակ հիմունք է, որը նախատեսված չէ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանու-

թյան համար: Այս հիմունքի համաձայն եկամուտները և ծախսերը ճանաչվում են, երբ դրամական միջոցները ստացվում են կամ կատարվում են վճարումներ:

3.3 Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Կազմակերպության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում ՀՀ դրամներով:

3.4 Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը:

4. Ֆինանսական հաշվետվության վավերացումը

Ֆինանսական հաշվետվությունը ստորագրվել է հրապարակման համար 2024թ. հուլիսի 31-ին՝ գործադիր տնօրեն Ա. Իկիլիկյանի և գլխավոր հաշվապահ Գ. Շամիրյանի կողմից:

Գործադիր տնօրեն Ա. Իկիլիկյան

Գլխավոր հաշվապահ Գ. Շամիրյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 06.08.2024 11:39